Մէյիտս, և ի հասարակ զօրացն կալեալ զչորս հազար արս՝ յետս յղէ ի Տփխիս քաղաք, և հրամայէ Հայոց՝ աւար առնել զբանակ Շահզադային։ Իսկ մնացեալ զօրքն Պարսից՝ հանդերձ Շահզադայիւն իւրեանց՝ փախուցեալ՝ ցան և ցիր եղեալ ի հեղեղատս, ի մայրս, ի մացառս, և ի ձորաձորս լերանց մազապուրծ եղեալք անցին ընդ գետն Երասխ, կորագլուխք և յամօթ պարտեալք։

Շնացող այն ազգն Պարսից ապիկար
Ասպատակաւ իբր գողոյ այսր գայր.
Հարիւր հազար զօրաց ամից կախան տայր.
Զրազում գաւառս Հայոց աւերել փութայր.
Ահացուցեալ զՀայս՝ պատիժ ըսպառնայր.
Տո՛ւք զամրոցդ ի ձեռս իմ արտաքուստ գոռայր.
Այն որ հպարտացեալ զմպախտս խոկայր,
Նա պարտեալ իբր մուկն ի ծակ իւր դառնայր.

Ապա գրեցին թուղթ ուրախութեան և աւետեաց Պասքևիչ և Մադաթով արիւ քաջ գեներալ զինուորքն՝ առ Շուշւոյ բերդին բնակեալ զօրապետն Ռուսաց, օրինակ զայս. ''Սիրեցեալ քաջ ընկերակից մեր պօլկօվնիկ Յօսէփ Ռէուտովիչ, և հաւատարիմ իշխանք Հայոց՝ աւետիս ձեզ. զի զչար վիշապն որ զձեօք պատեալ կայր, յաջողութեամբն Աստուծոյ թուլեալ յաղթեցաք, և փախուցեալ անցուցաք ընդ գետն Երասխ, ունայնացուցեալ զնա իսպառ յամենայն ընչից իւրոց։ Արդ՝ բացեալ զդուռն բերդիդ՝ արձակեսցես ըզՀայսն, զի եկեալ աւար ժողովեսցեն յաւարուստ իւրեանց,,։ Եւ զօրապետն ընթերցեալ զթուղթն՝ աւետիս մատուցանէր ամենայն Հայոց, և բացեալ զդուռն՝ արար ըստ հրամանին։ Իսկ Պասքևիչն Ենէրալ Ընշիֆն, զկնի քանի աւուրց առեալ ըզզօրսն Ռուսաց, գնաց զկնի Շահզադային այլ ևս տալ ի պատերազմ։

Ցո՛րկրորդ մարտիս յաղթող Եներալն Պասքևիչ,
Եղև հըպարտ գլխոց Պարսիցն կառափիչ,
Վեց հազարաւ զհարիւր հազարս հալածիչ,
Զզօրըս Պարսից իբր ըզբանջար կոտորիչ.
Զմեծ վիշապն որ զՀայովքս պատեալ կայր,
Նա թմբրեալ եհան զատամն նորա չար.
Ըստ իւր կարծեաց՝ բաց յինքենէ ոչ ոք կայր
Նա արար ըզնա զարդիս գերատար.

Խնդիր Առնեմ, Չէ որ տեսեալ Այսպէս բան,
Տէր զՈր եցոյց Խիւծեալ Բամից հայոց տան,
Նուաստ Էրեց Աղուանցի։

Գրեաց Խաչատուր երեց Աղուանեցի․ ի 1828 ամի Քրիստոսի. ի սուրբ ուխտն Տաթեւ.

---

### ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ

## ՖԱԹ—ԱԼԻ ՇԱՀԻ ՎԵՐԱՑ

(Շարունակութիւն)

Օ․ Հասան — Ալի միրզայ մականուանեալն Մուջաուլ Սալթանէ, համամայր Ֆարման — Ֆարմայի հետ, ծնել է օրն ուրբաթ մինը զիլհաջջի 1204 հիջրի։ Սա զարմանալի գեղեցիկ կըգրէր շէքէստէ ասած ձեռագիրն. ունէր 16 զաւակներ, որոնցից 7 արուներ էին և 9 դուստրներ. առաջին որդին էր Հուլաքու միրզայ՝ մականուանեալ Իլհադր խան։ 2, Աղայ խան՝ մականուանեալ Ֆրուկուլ դովլէ։ 3, Արղուն միրզայ։ 4, Մանկու — կաան միրզայ։ 5, Ուքթայի կաան միրզայ. էս հինգ որդիները ծնած են մի մօրէ, որ էր դուստր Ֆաթ — Ալի շահի հօր եղբօրը՝ այս ինքն Մուրթուզայ — կուլի խանի։ 6, Արուսէիդ միրզայ. մայրը սորա էր Կումեցի։ 7, Կահրաման միրզայ, որի մայրն էր դուստր Իսհակ խան կարայի։

Է. Մահամմէդ — Թաղի միրզա, Հըսամուլ Սալթանէ մականուանեալն, ծընել է շաբաթի օրն 6 սաֆարի 1206, շատ զօրեղ (շայէր) բանաստեղծ էր, վասն որոյ և շովքաթ մականուանէր ինքեան իւր ստանաւորների տակին: Սա ունէր 32 զաւակներ, որոնցից 15 ուստըրներ և 16 դուստրներ. առաջին որդին Աբուլֆաթ միրզա, որ ի մայրն էր դուստր Շիրազցի Իթըմաթուլ դովլէ Հաջի Իբրահիմ խանի: 2, Սուջաուլմուլք միրզայ, վերոյիշեալոյ հետ համամայր: 3, Սվբանք — չիր միրզա, որի մայրն էր Թուրքմանուհի: 4, Աբուսայիդ միրզա: 5, Թահմուրազ միրզա: 6, Ամիր — Թէյմուր միրզա, սրա մայրն էր Գումբուլի Հիւսէյն խանի դուստրն: 7, Մահամմեդ — Սէֆի միրզա, սորա մայրն էր դուստր միրզա, Ահմէդ Խալիֆէ Սուլթանի: 8, Ալէմ — գիր միրզա, համամայր Աբուլֆաթ միրզի: 9, Ջալալէդդին միրզա, համամայր Աբու — սէիդ միրզին: 10, Սանջէր միրզա, համամայր վերոյգրեալին: 11, Դարաբ միրզայ: 12, Էմիր — Շէյխ միրզա: 13, Իսհակ միրզա: 14, Բահրամ միրզա: 15, Էմիր Հիւսէյն միրզա *):

Ը. Ալի — Կուլի միրզա, մականուանեալըն Ռուքնուդովլէ, ծնել է հինգշաբաթի օրն 19 շավվալի 1207 հիջրի. ունէր 28 զաւակներ. սրանց կէսն արուներ և կէսն դուստրներ էին. առաջին որդին Սուլթան Բադիյ ուզ զման միրզա, մականուանեալն Սուլթան, սրա մայրն էր դուստր Մուսթաֆայ — Կուլի խանի հօրեղբօրն Ֆաթալի Շահի: 2, Ասքանդար միրզա, համամայր վերնոյն: 3, Ջահանգիր միրզա, համամայր վերնոյն: 4, Անու — շիրվան միրզա և ս ի դստերէ Մուսթաֆայ — Կուլի խանի: 5, Իսհակ միրզա, սրա մայրն էր Հրէուհի: 6, Դարաբ միրզա, մայրն էր Քուրդուհի: 7, Մահամմեդ — քերիմ միրզա: 8, Արասիաբ միրզա: 9, Մահամմեդ — րահիմ միրզա: 10, Նասրուլլայ միրզա: 11, Շուքրուլլա միրզա, սրա մայրն էր Կազվինի Կաջար ցեղէն: 12, Համզէ միրզա, մայրն էր Իսպահանցի: 13, Սիավուշ միրզա: 14, Ամանուլլայ միրզա, համամայր Նասրուլլայ միրզի հետ:

Թ. Շէյխ ալի միրզա, մականուանեալն Շէյխ ուլ մուլք. ծնել է գիշերը լոյս չորեքշաբաթի օրը 10 ռաջաբի 1210 հիջրի. ունէր 46 զաւակներ, սրանցից 25 հօգի արուներ էին և 21 դուստրներ: Առաջին որդին Նազար — ալի միրզա, սրա մայրն էր Աֆշար Նադիր Շահի սերունդէն: 2, Ահմէդ միրզա, որի մայրն էր Մալայիրի Թուրքման Մահամմեդ — Հարամ խանի քոյրն: 3, Ալի — Արսլան միրզայ մականուանեալն Սալար, որի մայրըն էր *) Վրաստանի կողմէն: 4, Կըզըլ

(*) Երբ Մամադ — Թաղի միրզին աքսորից տէրութիւնն յԱտրպատական, ուր ծնել են նրան երկու որդիներ Հարիր միրզայ և Հաշիմ միրզայ անուամբ:

(*) Սալարի որդի Վէլի միրզայն պատմեց ինձ թէ՝ հօրս մայրը կը պատմէր թէ՝ ինձ գերեցին Սօղանլուղ առացեալ գիւղումը՝ հօրս տան պատուհանի մէջն վարագոյրի տակին ծածկուած ժամանակս. հօրս անունն էր Վարդան, և մին եղբայր ունէի Աշոտ անուն, և ինքս տասն տարեկան կը լինէի, և թէ Թիֆլիսումը ազգականներ ունէինք. մին անգամ և եթ գնացած էի նրանց տունը որ Կուրի վերայ էր: Սորանէ՝ այս ինքն Վարդան անունէն մակաբերվում՝ որ Հայուհի էր նա:

Արսլան միրզայ համամայր վերնոցն: 5, Սուլթան — Սանջար միրզայ, նոյնպէս համամայր Սալարի: 6, Մահամմէդ Ռահիմ միրզայ համամայր Ահմէդ միրզին: 7, Սուլթան—Եւսուֆ միրզայ, որի մայրն էր քոյր Մալայիրցի Հադիխան Թուրքմանի: 8, Իսհակ միրզայ, համամայր վերնոյն: 9, Թուղուլ — լէսթաքին միրզայ, համամայր Սալարին: 10, Ֆէզուլլայ միրզայ, սրա մայրն էր Թուրքմանուհի: 11, Մահամմէդ միրզայ: 12, Մահամմէդ — Ջաֆէր միրզայ, համամայր Ֆէզուլլայ միրզի: 13, Շահ — Մուրադ միրզայ: 14, Մահամմէդ — քերիմ միրզայ, համամայր Ահմադ միրզին: 15, Իմամ — կուլի միրզայ: 16, Մահամմէդ — Հադի միրզայ, համամայր Ահմէդ միրզի: 17, Մահամմէդ — Թահէր միրզայ և համամայր Ահմէդ միրզի: 18, Սուլթան — Եաղուբ միրզայ, համամայր Սուլթան — Եւսուֆ միրզին: 19, Վէլի — Մահամմէդ միրզայ, որի մայրն էր դուստր Գուլուլի Կաջար միրզայ Մահամմէդ խանի: 20, Ջալալէդդին միրզայ, մայրն էր Թուրքմանուհի: 21, Ալի — Կուլի միրզայ: 22, Աբդուլ — լաթիֆ միրզայ, որի մայրն էր դուստր Մալայիրցի Աբդուլլաթիֆ խանի: 23, Աբդուլ — Ռէշիդ միրզայ, համամայր վերնոյն: 24, Մահամմէդ — Սէֆի միրզայ: 25, Ասքանդար միրզայ:

Ժ. Ալի — Շահ միրզայ, մականուանեալն Զիլլի Սուլթան, ծնեց երեք շաբաթի օրն, շաբանի ամսումն 1210 հիջրի՝ սա է համամայր Աբբաս — միրզայ Նայիբ ու սուլթանի հետ՝ ունէր 22 զաւակներ, որոնցից 10 արուներ և 12 դուստրներ էին. առաջին որդին Սէիֆ ուլ մուլք միրզայ, որի մայրն էր դուստր Կահէր — Կուլի միրզի, որի ազգաբանութիւնը հասցնումեն ցԱֆշար Նադր Շահը: 2, Մահամմէդ Հիւսէյն միրզայ: 3, Սէքֆուլ դովլէ միրզայ, համամայր Սէյֆ ուլ մուլք միրզին: 4, Մահամմէդ Թահեր միրզայ: 5, Սուջաւ — ուլ դովլէ միրզայ՝ համամայր վերնոյն: 6, Դավութ միրզայ: 7, Եաղուբ միրզայ: 8, Աբուլ — Կասում միրզայ: 9, Աբուլ — Հասան միրզայ: 10, Աբուլ — Ֆազլ միրզայ. երեք վերջիններին մայրն էր Կումեցի:

ԺԱ. Աբդուլլայ միրզայ, երևելի բանահիւս (շայէր). սա ծնեց ուրբաթ օրը 24 ջամադի էլ ավվալի 1210 հիջրի՝ ունէր 30 զաւակներ, որոնցից 10 որդիներ և 20 դուստրներ էին. առաջին որդին Մահամմէդ — Մօհսուն միրզայ, մայրն էր դուստր Կուանլու Կաձար Նըզամ-ուդ-դովլէ Սուլէյման խանի: 2, Իսհակ միրզայ: 3, Եաղուբ միրզայ: 4, Լութֆուլլայ միրզայ: 5, Խալիլ ուլլայ միրզայ: 6, Աբդուլ Համիդ միրզայ: 7, Աբդուլ Մէջիդ միրզայ: 8, Աբդուլ — Ռէշիդ միրզայ, համամայր Աբդուլ — Համիդի հետ: 9, Անուշիրվան միրզայ: 10, Աբու Սայիդ միրզայ:

ԺԲ. Իմամ — Վէրտի միրզայ, որ և մականուանեալն Իլ — Խանի, համամայր Ռուքըն ուլ դովլէին, ծնեց գիշերն լուս չորեքշաբաթի, 14 շավվալի 1211 հիջրի: Սա ունէր 11 զաւակներ, որոնցից 3 որդիներ և 8 աղջիկներ էին: առաջին որդին էր Իմամ — Կուլի միրզայ, սրա մայրն էր Աֆշար Նադիր Շահի սերունդէն: 2, Մահամմէդ — Հասան խան, որի մայրն էր դուստր Հօր եղբօր Ֆաթ — Ալի Շահի

Հաջի Մուստաֆայ Կուլի խանի։ 3, Ալի Մահամմէդ միրզայ, որի մայրն էր գեղացի երկրագործ։

ԺԳ. Մահամմէդ — Ռզայ միրզայ, որ ծնեց շաբաթ օրը 3 զիլկադդէի 1211 հիջրի։ Սա երևելի բանահիւս էր, ունէր 13 զաւակներ, որոնցից 10 արուներ և 3 դուստրներ էին։ Առաջին որդին Բզայ Կուլի միրզայ, որի մայրն էր Աֆշար Նադիր Շահի սերունդէն։ 2, Ալի — Կուլի միրզայ, մայրն էր Դուստր դուլուլի Կաճար Մահամմեդ խանի։ 3, Մահամմեդ — Զաման միրզայ, համամայր վերնոյն։ 4, Հըսամ էդդին միրզայ, մայրն էր քոյր Սպահանցի Ալի խանի։ 5, Մահամմեդ Ջաֆար միրզայ, մայրն էր Թեհրանցի։ 6, Մահամմեդ Հաշիմ միրզայ, մայրն էր Մազանդարանցի։ 7, Մահամմէդ Բաղր միրզայ, համամայր Մահամմեդ Ջաֆար միրզին։ 8, Մահամմեդ — Իսմայիլ միրզայ, համամայր Մահամմեդ Հաշիմ միրզին։ 9, Աքպէր միրզայ, որի մայրն Գիլանցի էր։ 10, Ջամալէդդին միրզայ, համամայր Մահամմեդ Ջաֆար միրզին։

ԺԴ. Հէյդար Կուլի միրզայ, որ ծնեց ուրբաթ օրը՝ 15 սաֆարի 1214 հիջրին՝ էր բանաստեղծ հաւասար Խաւէր երևելի բանաստեղծին։ Ունէր 11 զաւակներ, որոնցից 8 արուներ և 3 դուստրներ էին։ Առաջին որդին Մուրթուզայ Կուլի միրզայ, մականուանեալն Խան Բաբայ, սրա մայրն էր դուստր Մէհր Ալի խանի՝ որդւոյ Մուրթուզայ Կուլի խանի հօր եղբօր Ֆաթ Ալի շահի։ 2, Հաջի Նասրուլլայ միրզայ, համամայր վերնոյն։ 3, Ամանուլլայ միրզայ, մայրն էր Կաճարների սերունդէն։ 4, Նասրուլլայ միրզա, մայրն էր դուստր Մուստաֆայ—Կուլի խանի հօր եղբօր Ֆաթ — Ալի շահի։ 5, Ասադուլլայ միրզայ, համամայր Մուրթուզայ — Կուլի միրզի։ 6, Ալի Մահամմեդ միրզայ, մայրն էր Աֆշար Նադիր Շահի սերունդէն։ 7, Շուքրուլլայ միրզայ, համամայր Ամանուլլահ միրզին։ 8, Ալի աքբար միրզայ, համամայր Ալի Մահամմէդ միրզին։

ԺԵ. Մահմուդ միրզայ, ծնեց երկուշաբթի օրն՝ 12 սաֆարի 1214 հիջրի։ Սա բանաստեղծ էր և իւր բանահիւսութիւններն՝ իւր խակական անունով կ՚ յիշուին։ Ունէր 34 զաւակներ, որոնց կէսն արուներ էին և կէսն դուստրներ։ Առաջին որդին Մասուդ միրզայ, որի մայրն էր դուստր Երևանցի Մահամմէդ խանի։ 2, Մահամմեդ Զաման միրզայ, մայրն էր դուստր Զէնդ երևելի Ալի Մուրադ խանի։ 3, Շէյխ Սիավուշ միրզայ, համամայր Մասուդ միրզի։ 4, Սուլթան Թաքիշ միրզայ, մայրն էր Նադր շահի սերունդէն։ 5, Սուլթան — Ջհան միրզայ, համամայր վերոյգրելոյն։ 6, Քէեան միրզայ, մայրն էր Նհավանդի մօտը եղած Քեան գեղացւոյ դուստր։ 7, Կսան միրզայ։ 8, Աբդուլ բաղի միրզայ, մայրն էր Կազվինցի։ 9, Սարուք — Թէքին միրզայ։ 10, Խոսրով միրզայ։ 11, Մըբարէք միրզայ՝ համամայր Սուլթան — Թաքիշ միրզին։ 12, Շուքրուլլէ միրզայ։ 13, Նէէմէթ ուլլայ միրզայ։ 14, Իլինք — Թուշ միրզայ։ 15, Իէթարուլլէ միրզայ։ 16, Հէյդար միրզայ։ 17, Մահամմեդ միրզայ։

ԺԶ. Հմայուն միրզայ ծնեց լոյս ուրբաթի գիշերն՝ 28 ջամադի ուլ ավվալի, 1216 հիջրի՝ բանաստեղծ էր և ախադոսն բանահիւսութենէ էր Հիմմէթ։ Ու–

ներ 20 զաւակներ, որոնցից 11 արուներ և 9 դուստրներ էին։ Առաջին որդին Մահամմեդ—Շաֆի միրզայ, մայրն էր դուստրը Մազանդարանցի Սադրէզէմ միրզայ Շաֆիի։ 2, Էքպէր միրզայ, մայրն էր Շաղլու Կիօրգանիրէն։ 3, Ջհան—բախտ միրզայ։ 4, Մահամմէդ միրզայ, մայրն էր Կաճար Սփանդու Մուրթուզայ կուլի խանի։ 5, Սուլթան Սիամուք միրզայ։ 6, Աբուալ Ֆէիզ միրզայ։ 7, Նաջաֆ—Կուլի միրզայ։ 8, Աբու—Նասրադդին միրզայ, համամայր Աբուալ Ֆէիզ միրզին։ 9, Հասան միրզայ։ 10, Հիւսէյն միրզայ՝ ես վերջին երկուսն համամայր էին Սիամուք միրզի հետ։ 11, Նուր ուլ դէհր միրզայ, մայրն էր Դըմաւանդցի։

ԺԷ. Ալլահ—վերդի միրզայ՝ ծնեց գիշերն լոյս երեքշաբաթի օրը՝ 23 րամազանի 1216 հիջրի՝ բանահիւսութիւններ ունի՝ Բէյզա անուանելով զինքըն իւր ոտանաւորների մէջին։ Սրան ծնան մին որդի և երկու դուստրներ, որդւոյ անունն է Ռուստամ միրզայ, որի մայրն էր դուստր Հիւսէյն կուլի խանի՝ Ֆաթ—Ալի շահի հօրեղբօր։

ԺԸ. Իսմայիլ միրզայ, ծնեց լոյս ուրբաթի օրն 14 շաբանի 1217 հիջրին. ունէր 14 զաւակներ, որոնց կէսն որդիք՝ կէսն դուստրներ։ Առաջին որդին Սուլթան Ըվէյս միրզայ, որի մայրն էր Խօրասանցի։ 2, Արտաշիր միրզայ, համամայր վերնոյն։ 3, Մահամմեդ միրզայ։ 4, Կուլամ—Ռզայ միրզայ, համամայր Սուլթան—Ըվէյս միրզին։ 5, Կուլամ—Հիւսէյն միրզայ։ 6, Աբուլ—Կասում միրզայ։ 7, Ասադուլլահ միրզայ։

ԺԹ. Ահմեդ—Ալի միրզայ, ծնեց ուրբաթի օրն՝ 6 շաւվալի 1218 հիջրի, համամայր էր Մահմուդ միրզին։ Բանաստեղծ էր սա, և իւր անունով է յիշած իւր բանահիւսութիւնները՝ ունէր 11 զաւակներ, որոնցից 4 որդիներ և 7 դուստրներ էին։ Առաջին որդին Եակուբ միրզայ, որի մայրն էր Թուրքմանուհի։ 2, Սուլթան Հիւսէյն միրզայ, մայրն էր դուստրը Սուատքուհցի Մահամմէդ—Թաղի խանի։ 3, Նադր միրզայ, մայրն էր դուստր Ֆաթ—Ալի շահի եղբայր Հիւսէյն—կուլի խանի։ 4, Խան—Գեալդի խան, մայրն էր Թուրքմանուհի։

Ի. Ալի—Ռզայ միրզայ, համամայր Մահամմէդ—Ռզայ միրզին, գիշերն լոյս շաբաթի 6 զիլկադդէի 1218 հիջրի ծնեց, որ ունէր միակ դուստր։

ԻԱ. Վէյ—Կուբաթ միրզայ, ծնեց գիշերն լոյս ուրբաթի 19 Սաֆարի 1221 հիջրի, ունէր հինգ դուստրներ։

ԻԲ. Բահրամ միրզայ, ծնեց հինգ շաբաթի օրն՝ 5 րաբբիուլ աւվալի 1221 հիջրի, ունէր 5 զաւակներ, երեք որդի և երկուսն դուստրներ էին։ Առաջին որդին Էմիր—Ասլան միրզայ, որա մայրն էր դուստր Քիւրդստանցի Էմիր Ասլան խանի։ 2, Շուքուր ուլլա միրզայ, մայրն էր Մազանդարանցի։ 3, Ասադ ուլլա միրզայ, համամայր Շուքուր ուլլա միրզին։

ԻԳ. Շափուր միրզայ, ծնեց գիշերն լոյս չորեքշաբաթի 11 սաֆարի 1222 հիջրի, ունէր մին որդի և մին դուստր, անունն որդւոյն Մէհթի—կուլի միրզայ, որի մայրն էր դուստր Քիւրդստանցի Էմիր—Ասլան խանի։

ԽԴ. Մելիք — կասում միրզայ, մականուանեալն Ֆարման ֆարմա, ծնեց չորեքշաբաթի օրն 2 ջամադիուլ ախըրի 1222 հիջրի, չափահաս եղաւ, գնաց Ատրբէջան և կամեցաւ թագաժառանգ Աբբաս միրզայ Նայիբ — ուլ սալթանէի մօտն: *)

ԽԵ. Մանուչէհր միրզայ, ծնեց գիշերն լոյս ուրբաթի 4 ջամադուլ ախըրի 1222 հիջրի, ունէր 7 զաւակներ, որոնցից հինգն որդի և երկուսն դուստր էին: Առաջին որդին Ասադ ուլլա միրզայ, որի մայրն էր դուստր եղբօր Ֆաթ — Ալի շահի Հիւսէյն — կուլի խանի: 2, Սուլթան Իւսուֆ միրզայ, որի մայրն էր Վրաստանի կողմէն: 3, Մահամմեդ — Բեհապում միրզայ, համամայր Ասադուլլա միրզի: 4, Մահամմէդ Հիւսէյն միրզայ, որի մայրն էր դուստր Աֆշար Մահամմեդ — Հիւսէյն բէկի: 5, Ալի Մահամմեդ միրզայ, համամայր Ասադուլլահ միրզի:

ԽԶ. Հըրմըզ միրզայ, ծնեց գիշերը լոյս երկուշաբաթի 4 ջամադիուլ ավվելի 1222 հիջրի, ունէր վեց զաւակներ, որոնցից 4 որդիներ և 2 դուստրներ էին: Առաջին որդին Ֆարրուխ զատ միրզայ, մայրն էր դուստր Գուլուլի Կաճար Իբրահիմ խանի: 2, Ֆրիդուն միրզայ, համամայր վերոյն: 3, Նասրուլլահ միրզայ, մայրն Թուրքմանուհի: 4, Ֆարաջուլլահ միրզայ, համամայր վերոյն:

ԽԷ. Իյրաջ միրզայ, ծնեց հինգշաբաթի օրն՝ 1 ջամադիուլ ախըրի 1222 հիջրի՝ 10 զաւակներ ունէր, որոնցից հինգն ուստրներ և հինգն դուստրներ էին: Առաջին որդին Մահամմէդ Հասան խան, սրա մայրն էր Ասիֆէ, որ էր դուստր Զանդ Ալի — Մուրադ խանի: 2, Սանջար միրզայ, մայրն էր Վրաստանի կողմէն: 3, Կուլամ — Հիւսէյն միրզայ, մայրն էր դուստր Փազուքի Հիւսէյն — Ալի բէկի: 4, Մահամմէդ Կուլի միրզայ, համամայր վերոյն: 5, Ջաֆէր Կուլի միրզայ, համամայր վերոյն:

ԽԸ. Քէյքեա վուզ միրզայ, ծնեց ուրբաթի օրն 18 շավվալի 1222 հիջրի, ունէր 8 զաւակներ, սրանցից 5 ուստրներ և 3 դուստրներ: 1, Շահվերդի խան, մայրն Ջուանշիր Ֆազլ Ալի բէկի դուստրն: 2, Կըզըլ — Արսլան միրզայ, համամայր վերոյն: 3, Ասադուլլահ միրզայ, մայրն էր դուստր Կարադաղցի Ալի Կուլի բէկի: 4, Իսմայիլ միրզայ, համամայր Շահվերդի խանի: 5, Զուլֆըկար միրզայ, մայրն էր ևս դուստր Ֆազլ Ալի բէկի:

*) Սրա մայրն էր Որմեցի Աֆշար Իմամ Կուլի խանի դուստրն: Ծնան նորան երկու որդիներ և մին դուստր: 1, որդին էր Իմամ Կուլի միրզայ, մայրն էր Հայուհի Որմեցի, և 2, Րզա Կուլի միրզայ, որի մայրն էր Որմեցի Աֆշար: Մելիք Կասում միրզէն առաջինն եղաւ արքայորդիների մէջին ուրիշ ազգերի լեզուով խօսողն: Ազատ կխօսէր անգլիերէն, ֆրանսերէն, կհասկանար ռուսերէն և ասորի լեզուները: Տեղեակ էր եւրոպական սիստեմայով բժշկականութեան. երևելի էր բոլոր Պարսկաստանում հրացան և ատրճանակ ձգելում, նոյնպէս և որսորդութեան մէջին՝ վասն որոյ Մահամմեդ շահն շատ անգամ կհրաւիրէր նրան Թէհրան իւրեան որսորդակից լինելոյ համար: Մելիք Կասում միրզէն մեռաւ 1858 օգոստոսին՝ իւր Շիշաւան գիւղում, որ Մարաղայի մհալում է Որմիոյ ծովակի արեւելեան կողմում ընկած՝ կէս վերստաչափ հեռաւորութիւնով ծովակէն:

ԽԹ. Շահ—Կուլի միրզայ, ծնեց չորեքշաբաթի օրն 11 մըհառամի 1223։ 9 զաւակներ ունէր, որանցից երեքն ուստրներ՝ վեց դուստրներ էին։ Առաջին որդին Արդաշիր միրզայ, մայրն էր դուստր Դաշլուի Կաճար Հասան խանի։ 2, Մահամմէդ Ալի խան, մայրն էր դուստր Դուլուի Կաճար Մահամմեդ խանի։ 3, Խալիլ ուլլահ միրզայ, մայրն էր ի ցեղէն Բօզ—չլուլու։

Լ. Մահամմէդ Մէյթի միրզայ, ծնեց գիշերն լոյս կիւրակէ՝ 1 շավվալի 1233 հիջրի, ունէր 9 զաւակներ, որոնցից չորս ուստրներ՝ հինգն դուստրներ էին։ Առաջին որդին Մահամմեդ—Քեարիմ խան, որի մայրն էր դուստր Եզաէդդինլու Կաճար Ամիր խանի։ 2, Մահամմէդ—Սադըկ խան, մայրն Թէհրանցի։ 3, Մահամմեդ—Րահիմ խան, մայրն էր դուստր Կուանլու Մէհր Ալի խանի։ 4, Լութֆ Ալի խան, համամայր վերնոյն։

ԼԱ. Քէյ Խօսրով միրզայ, ծնել է գիշերն լոյս հինգշաբաթի 13 սաֆարի 1224 հիջրի, համամայր է Քէյքեավուզ միրզին, ունէր ութ զաւակներ, որոնցից 3 ուստրներ, 5 դուստրներ։ Առաջին որդին Մահամմէդ Սադըկ խան, մայրն էր դուստր Թէհրանի Բէգլարբէգի Մահամմէդ Թաղի խանի։ 2, Մուրթուզա Կուլի խան։ 3, Մահամմեդ—Հիւսէյն միրզայ. երեքեանն էլ մին մօրից էին ծնած։

ԼԲ. Քէյումարս միրզայ, Իլխանի, որի տիտղոսն էր Աբուլմուլք, ծնեց երեքշաբաթի օրն 25 ջամադիէլ ախրի 1224 հիջրի, ունէր 6 զաւակներ, որոնցից չորս ուստրներ և երկուսն դուստրներ։ Առաջին որդին Հուշէնկ միրզայ, որի մայրն էր Վրաստանի կողմէն։ 2, Սիամուք միրզայ, մայրն էր դուստր Մազանդարանցի Լէշքէր Նուրի միրզայ Կադրի։ 3, Սուլթան Ահմէդ միրզայ, մայրն էր Դուլուի Կաճար Մահամմեդ Հասան խանի։ 4, Իդրիս դուստր միրզայ, համամայր Հուշանկ միրզին։

ԼԳ. Ջհանշահ միրզայ, համամայր Մահմուդ միրզին, ծնեց լոյս կիրակի 5 ռամազանի 1224 հիջրի, ունէր 9 զաւակներ, որոնցից 6 ուստրներ և 3 դուստրներ էին։ Առաջին որդին Ադիլ—շահ միրզայ։ 2, Ջհանդար միրզայ։ 3, Կումբուզ միրզայ։ 4, Ֆազլ շահ միրզայ, համամայր Ջհանդար միրզին։ 5, Մահամմէդ Հիւսէյն միրզայ, համամայր Ադիլ շահի հետ։ 6, Մահամմեդ Հաշիմ միրզայ։

(Ի յետագայս).

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

# ԱԶԳԱՅԻՆ

## ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Դ. Սրբազնագոյն Կաթողիկոսի օծման Թ-րդ տարեդարձը՝ որ ի 21-ն ամսոյս էր՝ արժանաւոր հանդիսիւ եւ շքով կատարեցաւ ի 23-ն ամսոյս յաւուր Կիւրակէի Հոգեգալստեան։

## ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ Ի ԲԻՒՐԱԿԱՆ

Վեհ. Հայրապետս մեր ի 27-ն ամսոյս գնաց յամարանոցն իւր ի Բիւրական։